№ 105 ՈՒՐԲԱԹ ՅՈՒՆԻՍԻ 11 **1899** ՈՒՐԲԱԹ ՅՈՒՆԻՍԻ 11 № 105

ՔՍԱՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Բաշտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Բաշտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պէտք է օգտվել յարմար առիթներից.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Հայի բերքը Երևանի նահանգում. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Վանի կրթական և կրօնական վիճակը:

## ՊԷՏՔ Է ՕԳՏՎԵԼ ՅԱՐՄԱՐ ԱՌԻԹՆԵՐԻՑ

—

«Կովկասը մի ընդարձակ Շվէյցարիա է. Կովկասեան լեռները իրանց արօտատեղերով նոյնն են, ինչ շվէյցարական Ալպերը» —ահա այն խօսքերը, որ մենք լսում ենք յաճախ մեր շուրջը: Եւ սակայն մեր լեռնային աղգաբնակութիւնը ապրում է աննախանձելի վիճակի և մշտական կարօտութեան մէջ, իսկ շվէյցարական գիւղացին վարում է մարդավարի կեանք, կարողանում է խնայողութիւններ անել և ապահովել ոչ միայն իր օրական հացը, այլ և իր բարոյական պահանջները: Նա իր լեռներում ստեղծել է մի տնտեսութիւն, որ կատարեալ կերպով վարձատրում է աղգաբնակութեան աշխատանքը և ապահովում նրա կարիքները: Մի այնպիսի հասարակ առարկայ, ինչպէս է պանիրը, տալիս է շվէյցարական ժողովրդին ահագին օգուտներ և կազմում է Շվէյցարիայի հարստութեան ամենամեծ աղբիւրներից մէկը: Շվէյցարական պանիրը արտահանվում է Եւրոպայի բոլոր երկիրները և այնտեղ վաճառվում ամենաբարձր գներով, չը հանդիպելով ոչ մի լուրջ մրցման որ և է կողմից: Շվէյցարական անանապահութիւնը մատակարարում է մի ս Ֆրանսիայի վաճառանոցներին. շվէյցարական խտացրած կաթը ծախվում է թէ Եւրոպայի և թէ Ասիայի ու Աֆրիկայի հեռաւոր ծովափներում: Եւ այդպիսով այդ լեռնային երկրի գիւղատնտեսութիւնը ներկայանում է իբրև ձեռնտու և օգտաւէտ արդիւնագործութիւն:

Մենք շատ լաւ գիտենք, որ բազմաթիւ պատճառներ կան թէ ինչու մեր երկիրը, որ ունի զարգացման նոյն նիւթերը, ինչ որ Շվէյցարիան, այնքան յետ է մնացել և այժմ իր լեռնային մասում նոյն իսկ մտել է ճգնաժամի շրջանի մէջ: Բայց մի և նոյն ժամանակ համոզված ենք, որ կարելի է մեծապէս նպաստել երկրի բարգաւաճմանը, գործադրելով մի շարք բարեփոխութիւններ և կազմակերպելով ժողովրդի օգնութեան նպատակայարմար ձեւեր: Օգտվենք հէնց այն օրինակից, որ մենք առաջ բերինք: Փորձերը ցոյց տուին, որ Անդրկովկասի լեռնային մասում շվէյցարական եղանակով պատրաստած պանիրը ունի նոյն գեղեցիկ յատկութիւնները, ինչ որ բուն շվէյցարականը և մայրաքաղաքի վաճառանոցներում ծախվում է լաւ գներով: Սակայն այդ պանիրը պատրաստվում է մեծ քանակութեամբ, դեռ չէ կարողացել ստանալ այն միօրինակութիւնը, որ անհրաժեշտ է ամեն մի բազմաքանակ ապրանքի համար: Լաւ նմուշների հետ դուք հանդիպում էք վատ նմուշների, մի մասը չափազանց կակուղ է, միւսը չափազանց ցամաք և այլն:

Ահա, ուրեմն, գտնված է այն ձևերից մէկը, որով մենք կարող ենք օգնել մեր լեռնային ժողովրդին: Բայց անյայտ չեն և ուրիշ ձևեր, որոնք կարող էին էապէս բարեփոխել լեռնային տնտեսութիւնը: Պէտք է նկատել, որ իրերի ընթացքը դարձնում է անասնապահութեան արդիւնքը աւելի և աւելի թանդ և ուրեմն լեռնային աղգաբնակութեան միջոց է տրվում չը վախենալ ծախքերից և զարգացնել անասնապահական արդիւնագործութիւնը: Սակայն անհրաժեշտ է, որ մեր աղգաբնակութիւնը աւելի համարձակ և աւելի լուրջ քայլեր անի այդ նոր ուղղութեամբ, քան մինչև այժմ տեղի է ունեցել և աւելի մեծ չափով օգտվի այն բոլոր դէպքերից, որոնք կարող են նպաստել նրա տնտեսութեան զարգացման: Ներկայ աշնան Պետերբուրգում նշանակված են համառուսական ցուցահանդէս և ժողով, որոնք պէտք է ներկայացնեն Ռուսաստանի կաթնատնտեսութեան դրութիւնը և նրա կարիքները: Նրանք կարող էին նպաստել և մեր երկրին, եթէ մենք ընդունակ լինէինք ներկայացնել մեր արդիւնագործութեան այդ ճիւղը և հեղինակաւոր կերպով յայտնէինք մեր պահանջները: Եւ այդպիսի առիթներ պակաս չեն:

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՄԱՄՈՒԼ

—

Մեր երկրի մէջ էլ հետզհետէ զարգանում է կապիտալիզմը, որ իր ձեռքն է առնում արդիւնագործութեան աւելի և աւելի լայն շրջաններ: Դրանից առաջացած երևոյթների մէջ առաջինը, ի հարկէ, այն է, որ դրամագլուխը, ստեղծելով գործարանական աշխարհ, տակն ու վրա է անում եղած տնտեսական կարգերը: Մտնում են նոր պահանջներ, նոր շահեր: Գործարանը պէտք ունի աշխատող ձեռքերի մեծ քանակութեան և այդ քանակութիւնը նա գլխաւորապէս գիւղերից է հանում: Մեզանում արդէն քիչ չեն գործարաններ ունեցող գիւղեր, որոնց համար բանւորութիւնը արդէն ապրուստի մի նշանաւոր միջոց է կազմում: Կան և այնպիսի խոշոր գործարանական ձեռնարկութիւններ, որոնք կենտրոնացած են յայտնի տեղերում և որոնք աւելի մեծ քանակութեամբ աշխատաւորներ են քաշում հեռաւոր գաւառներից: Այս վերջին տեսակի բանւորութիւնը աւելի ևս կերպարանափոխում է գիւղական կեանքը, քանի որ իր գիւղի գործարանում բանող գիւղացին դեռ իր հողի վրա է, իր միջնավայրից չէ պոկված, մինչդեռ պանդխտող գործաւորը, հեռանալով իր բնակութեան տեղից, ընկնում է իր համար խորթ պայմանների մէջ, ենթարկվում է այնպիսի ազդեցութիւնների, այնպիսի հասկացողութիւնների, որոնց նա չէր ճանաչի, եթէ իր գիւղում նստած լինէր: Մի յայտնի ժամանակամիջոցից յետոյ վերադառնալով տուն, պանդխտած գործաւորը տանում է իր հետ շատ բան այն ամենից, ինչ նա իւրացրել է իր պանդխտութեան ժամանակ: Այնպէս որ խոշոր գործարանական կենտրոնները, որքան էլ հեռու լինեն մեր գաւառներից, այնու ամենայնիւ համարեա անմիջապէս ազդում են նահապետական շրջանների վրա: Այս շարժումը, այս կերպարանափոխութիւնը, որ տեղի ունի մեր մէջ տարիներից ի վեր, ուժեղ, բնական է որպէս տնտեսական մի երևոյթ, որ տեղի է ունեցել ամեն տեղ: Կապիտալը հոսանք է ստեղծում, ղեկավարում է. դա իրերի գործնական, հետևաբար և անխուսափելի ընթացքն է: Հարց է ծագում, բաւական բարդ, դժուար հարց, թէ տնտեսական այս նոր պայմանները ինչ ազդեցութիւն կանեն մեր երկրագործ աղգաբնակութեան վրա, ուր կը տանեն նրան: Այս առիթով ռուսաց մամուլի մէջ կատաղի կռիւ է սկսվել վերջին տարիների ընթացքում: Մի ստուար կուսակցութիւն հաստատած է, որ գիւղական աղգաբնակութիւնը իր բարեկեցութիւնը պիտի ստեղծէ իր հողի վրա, պահպանելով իր բարոյական յատկութիւնները, հարազատ մնալով հողագործի տիպին, որի զարգացումը կը լինի աղատ մշակողի դիրքը: Այդ տեսակէտից կապիտալիզմը ստրկացնող ոյժ է, գործարանը—բարոյական անկման և այլասերման օրջ: Հակառակ կուսակցութիւնը, չուրանալով կապիտալի բացասական յատկութիւնները, համարում է նրան մի անհրաժեշտ և անխուսափելի կայան, որով պիտի անցնի երկրագործ դասակարգը իր բարելաւութեան հասնելու համար:

Մենք չենք մտնի այդ բանակռւի մէջ: Բայց չենք կարող չը յիշատակել մի քանի գծեր, որ բերում են կապիտալի անհրաժեշտութեան կողմնակիցները իբրև հաստատութիւն, որ գործարանական կեանքը իր բոլոր վատ կողմերի հետ տալիս է և դրական, ցանկալի հետևանքներ: «Начало» ամսագրի մայիսի համարում, որ նոր հրատարակվեց, տպված է Ռուսաստանի մի բաւական նշանաւոր գործարանական քաղաքից գրված թղթակցութիւն, որի մէջ կան բանւորական կեանքի մի քանի խոշոր գծեր: Նամակագիրը ամենից շատ չեշտում է այն հանգամանքը, որ գործարանական կեանքը գրագիտութիւն է տարածում: Իվանովո-Վոզնեսենսկ քաղաքը, որտեղից գրված է այդ նամակը, ունի 36 գործարան և մօտ 35,000 բանւոր: Հասարակ դասակարգի համար կան 12 դպրոցներ, որոնցից 3 հատը պահում են գործարանատէրերը: Իսկ դպրոցական հասակ չունեցողների համար գոյութիւն ունեն կրթական ուրիշ հաստատութիւններ—երեք ձրի գրադարաններ, կիրակնօրեայ դպրոց, հանրամատչելի թատրոն, ժողովրդական դասախօսութիւններ: Հետաքրքրական են մանաւանդ գրադարանները: Նամակագիրը գրում է.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՎԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ԿՐՕՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

(Նամակ Վանից)

—

Մտադիր լինելով «Մշակի» մէջ մեր թղթակցութիւններ շարունակելի ընել, հարկ համարեցի մի անգամ ընդհանուր և ճիշդ ծանօթութիւններ տալ Վանի կրթական և կրօնական վիճակի վրա ձեր ընթերցողաց: Մեր սոյն տեղեկութիւնը յայտնի պիտի ցուցնեն ընդհանրապէս Վանայ նահանգի հայութեան կրթական և կրօնական ողբալի կացութիւնը և ներկայ կրօնափոխական շարժման բուն պատճառներէն գըլխաւորն, այն է բարոյական վատթարացումն:

Արական - ծխական վարժարաններ.—Երբեմն ոչ միայն կուսակալութեան կենտրոնին՝ Վանայ մէջ ունէինք արական-ծխական վարժարաններ եկեղեցիներուն կից, այլ նաև նահանգին բոլոր միւս գիւղաքաղաքներուն (Պաշկալէ, Արճէշ, Շադախ, Մոկոճ) և գիւղերէն շատերուն մէջ: Գիւղերու և գիւղաքաղաքներու մէջ այլ ևս վարժարաններ չը կան, սղութիւն և թշուառութիւն զամենք կաչկանդած է, կըրթութեան վրա այլ ևս մտածող չը կայ: Իսկ բուն Վանայ մէջ մնացած են միայն երեք արական-ծխական վարժարաններ. Նորաշէն, Արարք և Ցիսուսեան: Այս երեք վարժարաններու մէջ կուսանին իբր 800 մանուկներ, եօթէն տասն տարեկան: Ուսման նիւթեր խիստ տարրական և անգոհացուցիչ մեթոդով կաւանդվին, վասն զի ոչ կանոնաւոր ծրագիր և ոչ բարեկարգութիւն ունեն. ուսուցիչները (երեք վարժարանաց մէջ ընդամեն 15 հոգի), բացի մէկ երկուքին, բոլորն ալ անկարող մարդիկ են, կը ծառայեն ամսական 4 մէջիտ (6 ռուբլի) կամ վեց մէջիտ (9½ ռուբլի) վարձքով: Ադնցմէ շատեր իրենց մտային կարողութեամբ նոյն իսկ չեն հաւասարեր մեր երբեմնի տիրացուներուն, վասն զի շատեր արհեստի, չարչիութեան (մանրավաճառ.), զրագրութեան և կամ ուրիշ պաշտօններու մէջ չը յաջողելով, եկած և փարած են ուսուցչութեան, տեսակ մը անկելանոց դարձնելով զայն:

Աղջկանց վարժարաններ.—Քաղաքիս մէջ երկու ազգային օրիորդական վարժարաններ կան, մինն է Սանդխտեան վարժարան, որու համար փոքրիկ կտակ մը ըրած է բարեյիշատակ Սանասարեան: Այս վարժարանն ունի 400-ի մօտ աշակերտուհիներ, որոց տրված ուսում և կրթութիւնը շատ անգոհացուցիչ է: Վարժարանին ուսուցչական խումբը կը բաղկանայ մի ծթռած քահանայէ, երկու տգէտ ուսուցիչներէ (որոնք իբր նժոյշ մնացած են 20—30 տարի առաջ հրապարակ գրաւող պատուելիներէն) և հինգ վարժուհիէ (որոց չորս, օր. Աճէմեաններ, իրարու քոյր են և ժառանգաբար կը պաշտօնավարեն ապարդիւն կերպով): Երկրորդ օրիորդական վարժարանն բացված է Ա. բարքի մէջ, բայց դեռ նոր լինելուն կազմակերպված չէ:

Անհատական վարժարան.—Այժմ Վանի միայն մէկ անհատական մասնաւոր վարժարան ունի (երբեմն չորս հատ ունէր), այս է Երամեան վարժարան, որու հիմնադիր—տնօրէնն է աչազուրկ հանրածանօթ Համբարձում Երամեան, որը անսման յարատևութեամբ 21 տարիէ ի վեր կը շարունակէ իր գործը խիստ արդիւնաւոր կերպով: Այս դպրոց կը կոչվի նոյնպէս Որբանոցի վարժարան, վասն զի իր առաջի եօթն տարիներուն իսկապէս որբանոց մ'էր և կը խնամուէր «Խնամատար» կոչված տեղական ընկերութեան կողմէ, որու հիմնադիր եղած էր՝ դարձեալ յիշեալ աչազուրկ ուսուցիչ Երամեան, որ ընկերութիւն ցրուելէն յետոյ դպրոցը իր հաշուոյն շարունակեց ցերեկվայ թոշակաւոր աշակերտներ ընդունելով: Այժմ այս Երամեան կամ Որբանոցի վարժարան վանեցոց բոլորին համակրանք գրաւած է, իր հասուցած բազմաթիւ աշակերտներու շնորհիւ և իր միօրինակ բարեկարգ ուղղութեամբ: Սոյն վարժարանի աշակերտներու թիւն է 280. այս տարի, ասոնցմէ իբր 100 աշակերտ ձրի են, իսկ մնացեալները թոշակաւոր, որոնցմէ կը գոյանայ տարեկան մօտ 300 ոսկի (2600 ռուբլի) եկամուտ: Ասկէ զատ դպրոց չունի ուրիշ հաստատուն եկամուտ, թէև երբեմն-երբեմն ընդունած է արտասահմանէն և բուն իսկ տեղացիներէն դրամական նուէրներ: Հապա ինչքան լաւ կը լինէր, որ պատրիարքարան և բարեսէր ազգայիններ խորհէին հաստատուն եկամուտներով և կտակներով ապահովել այս անհատական ձեռնարկութեան ապագան, ձեռնարկութիւն մը, որ իր 21 տարվան յարատևութեամբ այնչափ լուրջ կերպով ծառայած է ազգին, և երբ ներկայ տնտեսական յուռի կացութեան մէջ ժողովուրդ նրա համար կը զոհէ իբր 300 ոսկի, իր չափազանց կրթասիրութիւն կը ցուցնէ: Միսիոնարաց վարժարան բնաւ չը կրցաւ մրցել այս անհատական դպրոցին հետ և բողոքականութիւնը ասոր համար չը կրցաւ արմատ բռնել: Երամեան միշտ ջանացած է պահպանել իր դպրոցի բարձր դիրքը, միշտ գործած են Վանայ մէջ գտնված առաջնակարգ ուսուցիչներ (որոնցմէ շատեր բուն այդ վարժարանի ընթացաւարտներն են) և ունենալ Քոլէճի մը ծրագիր: Այժմեան ուսմանց ծրագիր տասն դասարան ունի (իւրաքանչիւր 1 տարի) և ուսուցչաց թիւն է 10 հոգի. բոլորն ալ մնայուն: Ոչ մի վարժարան չունի ասոր նման մատենադարան, բնագիտական գործիներ, դեղեր, կենդանաբանական և բուսաբանական պատկերներ, պատի խոշոր քարտէզներ և վերջապէս կանոնաւոր դպրոցի մը ամեն տեսակ յարմարութիւններ, որոնք ամէնք եղած են հիմնադրին անձնական զոհողութիւններով և ընթացաւարտ աշակերտներու հանգանակութիւններով: Սակայն սոյն արդիւնաւոր դպրոց կոչված է ապագային աւելի ծանր մրցումներու դիմագրաւել, վասն զի տեղւոյս կաթոլիկներու առաջնորդ Անտոն վարդապետ դոմինիկեաններու աջակցութեամբ ձեռնարկած է հիմնել Մխիթարեան վարժարան մը, որ անշուշտ ձրի պիտի լինի և իր ֆրանսերէնով պիտի գրաւէ շատ աշակերտներ: Չը գիտենք թէ Երամեանի անհատական ջանքեր պիտի բաւեն միայն ազգու դիմագրաւութիւն մը ընել օտար կրթութեան այս երկու մրցմանց դէմ (ամիրիկեան և կաթոլիկ): Կը լսենք թէ Երամեան այս տարի արդէն ներկայ սղութեան պատճառաւ պիտի բաց մնայ իր ծախուց մէջ, եթէ օգնութիւն մը չը հասնի իրեն: Եթէ քիչ մը աւելի խօսեցայ այս վարժարանին վրա, պատճառն այն է, որ մեր ներկայ տեսութեան

Եթէ դուք ուզում էք համոզվել, որ գործարանում բանողին չափազանց շատ հարկաւոր է գիրքը, որ նրա համար գիտութիւնը անհրաժեշտ է, ինչպէս հացը, ջուրը, ջերմութիւնը և լոյսը,—գնացէք գրադարան-ընթերցարանը. այնտեղ դուք կը տեսնէք բանւոր մարդկանց մի խումբ, որ նոր է դուրս եկել գործարանից և ամենքը, չը նայած որ սաստիկ յոգնած են 9 ժամվայ ծանր աշխատանքից, ագահութեամբ կարդում են լրագիր, ամսագիր կամ գիրք: Այստեղ, գրադարանում, դուք կարող կը լինէք ըմբռնել նաև գործաւորների համակրանքները դէպի այս կամ այն գիրքը: Մի քանիսները, օրինակ, ուզում են պատմական գրուածքներ, մի քանիսները բնագիտական գրքեր, միւսները նախապատիւ են համարում վիպագրութիւնը: Եւ գրքի ընտրութիւնը կատարելապէս գիտակցական է. բանւորը ինքն է ընտրում, ղեկավարվելով իր ճաշակով և համակրանքներով. նա ձեզ կասի թէ ինչու նախապատիւ է համարում Լեվ Տոլստոյին, Տուրգենեվին, Դոստոեվսկուն:

Ընթերցասիրութիւնը այն աստիճանին է հասնում, որ բանւորները գրքեր կարդում են նոյն իսկ գործարանի մէջ:

Ես տեսայ Իվանովո-Վոզնեսենսկում ջուլհակներ, որոնք կարդում էին մեքենաների դժոխային դղրդոցների և աղմուկի մէջ և, խոստովանում եմ, ինձ ապշեցնում և յուզում էին այդպիսի պատկերները: Գիրքը կարդացվում է: Ագահութեամբ լափվում է երես երեսի ետևից: Հազուագիւտ բան չէ տեսնել ջուլհակի մօտ Բոկլ, Շպիլհագէն և այլն...

Եւ այս բոլոր դիտողութիւններից նամակագիրը հետևեցնում է, որ սէրը դէպի գիտութեան լոյսը, սովորելու ձգտումը շատ է զօրեղ գործարանում, քան գիւղում: Նշանակելի է մանաւանդ այն, որ գործարանը կնոջն էլ տանում է այդ ուղղութեամբ. կինն էլ կարդալ, հասկանալ է սովորում:

Այս հանգամանքները, ի հարկէ, անժխտելի են: Եթէ գիւղից կտրված հողագործը իրերի անխուսափելի պահանջով պիտի ընդունէ գործարանական կեանքի վայր ի վեր անող կարգերն ու հասկացողութիւնները, բնական կը լինէր որոնել այնպիսի երևոյթներ, որոնք ցոյց տային թէ այդ մարդը նոր պայմանների մէջ էլ կարող է առաջանալ իբրև մարդ, իւրացնել լուսաւոր մտքեր, գիտակցութիւն և ինքնաճանաչութիւն ձեռք բերել: Այդպիսի բարերար ներգործութիւն կապիտալը մեր երկրում դեռ չէ ցոյց տալիս: Մեր գիւղերում բացված գործարանները շատ են մանր կամ ղեկավարվում են հին հասկացողութիւններով սնված մարդկանց ձեռքով և այդ պատճառով գիրքը, ուսման լոյսը այնտեղ չեն գնում, գործարանը մեր գիւղում առ այժմ միայն անբարոյականացնող գործունէութիւն ունի: Ինչ վերաբերվում է խոշոր արդիւնաբերութեան կենտրոններին, այնտեղ էլ մինչև այժմ դեռ չէ յայտնվել այնպիսի գործունէութիւն, որ բանւորների մտաւոր պահանջները նկատի ունենար: Բագուի, Բաթումի գործարանները կնթական հիմնարկութիւններ կամ չունեն, կամ ունեն շատ աննշան չափերով: Այնտեղ էլ, ուրեմն, գործաւորները զրկված են լոյսից և գլխաւորապէս անբարոյական հասկացողութիւնների մէջ են ապրում: Կայ մի հանգամանք, որ կապիտալիզմի, գործարանական կեանքի բոլոր բացասական յատկութիւնների մէջ մտցնում է մարդկային շահերի սկզբունքներ: Դա այն է, որ կապիտալը դէպի իրան է գրաւում և շատ ինտելիգենտ մարդկանց, որոնք և ծրագրում ու իրականացնում են գրադարաններ, կիրակնօրեայ դպրոցներ և այլն: Մեր երկրում այդպիսի ինտելիգենցիայի գոյութիւնը աննկատելի է. մեր ինտելիգենտը չտապում է իւրացնել կապիտալիստի, շահագործողի ինստինկտները, միանգամայն մոռանալով որ նրա և ոչ-ինտելիգենտ կապիտալիստի մէջ պիտի լինի զանազանութիւն: Ահա թէ ինչն է գլխաւոր պատճառը, որ մեր մէջ գործարանը դեռ չէ. տալիս իր մէջ գործողին ոչինչ մտաւոր սնունդ... Իսկ սա շատ և շատ ցաւալի է:

## ՀԱՅԻ ԲԵՐԳԸ ԵՐԵՒԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ

(Նամակ Երևանից)

—

Եթէ գարնան սկզբի երկու ամիսները բոլորովին չորային անցան և աշնանացանքերը մի քանի տեղերում մեծ վնասներ կրեցին, միւս կողմից մայիս ամիսը բարեյաջող նշանակութիւն ունեցաւ, մանաւանդ լեռնային մասերում, ուր ցանքերը տեղի են ունենում բացառապէս գարնանը: Մարտ և ապրիլ ամիսները անցան սովորականից տաք և չորային. այդ բանը նպաստեց մեծապէս լեռնոտ դաշտերին սովորականից վաղ սկսել ցանքերը և առանց ընդհատելու առաջ տանել սերմ դցելը: Համարեա բոլոր տեղերը վերջացրել էին իրանց գործը, երբ երկար ամիսներ անձրևի երես չը տեսած Երևանի նահանգը միանգամից սկսում է ողողվել առատ անձրևների տարափներով: Այդպիսի անձրևներ պարբերաբար շարունակվեցին ամբողջ մայիսի ընթացքում և թէպէտ ձեռքից գնացած աշնացանքերը չուղղվեցին, սակայն գարնանացանքերը ոռոգվում էին: Եւ այժմ Սուրմալուի, Շարուր-Դարալագեազի, մանաւանդ Նոր-Բայազէտի, Աբարանի և Դարաչիչագի դաշտամասերում բերքը այնքան աջող է, որ ոչ միայն սովի տագնապը անցել է, այլ և մի քանի տեղերում սպասվում է շատ առատ բերք: Սրանից յետոյ եթէ չորային էլ անի, դարձեալ երկիրը չը կայ, ամիսներ շարունակ չոր մնացած հողը ոռոգվել է բաւական չափով:

Այդպէս են հէնց աշնանացանքերը. նրանք մինչև անգամ շատ տեղերում ծիլեր չեն արձակել, սերմի հետքեր շատ տեղերում նկատելի չեն: Երևանի նահանգում գարնանացանքերը բռնում են մեծ տեղ, իսկ աշնանացանքերը փոքր, այն էլ մեծ մասամբ դաշտերում, որոնք գլխաւորապէս ջրովի են, և այդ պատճառով այս տարի վնասվեցին միմիայն անջրդի աշնանացանքերը, այլ թաղը այժմ հաղորդակցութիւն ունի քաղաքի հետ երկու ճանապարհով, որոնցից մէկը անցնում է Մուշտայիդ այգու միջով, իսկ միւսը Ելիզավետեան փողոցով: Դիդուբէի բնակիչները վաղուց խնդրել էին, որ առաջին ճանապարհը ընդարձակվի, սալայատակվի և կանոնաւոր կերպով միացվի Միքայէլեան փողոցի հետ: Թիֆլիսի դուման իր վերջին նիստում որոշեց խնդրել, որ թոյլ տրվի Մուշտայիդի միջով անցնող ճանապարհը դարձնել փողոց, իսկ եթէ այդ անկարելի եղաւ, բանալ նոր փողոց Մուշտայիդի և Այգեգործական այգու սահմանագծով: Այդ ուղղութեան վրա գտնվում է Լօրդկիպանիձէի մի կտոր հողը, 32 քառակուսի սաժէն, որ արդելք է հանդիսանում փողոց անցկացնելուն, որովհետև Լօրդկիպանիձէ իր այդ հողի համար պահանջում է 30,000 ռուբլի: Դուման խնդրում է, որ այդ հողի վերաբերութեամբ գործադրվի պարտաւորեցուցիչ օրէնքը, որով հողը գնահատվում է յանձնաժողովի ձեռքով և վերցվում սեփականատիրոջից: Պէտք է նկատել, որ 5—6 տարի սրանից առաջ նոյն այդ հողը Լօրդկիպանիձէ պատրաստ էր տալու քաղաքին 1000 ռուբլիով. իսկ այժմ նա չէ կամենում, որովհետև այնտեղ գարեջրատուն է բացված, որ տալիս է նրան մեծ շահ:

—

Կառավարչապետի դիւանատունը ամսիս 26-ին տեղափոխվելու է Կօջոր ամարանոցը:

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը կարգադրել է, որ այսուհետև մասնաւոր դպրոցներում քննութիւնները կատարվեն պետական ուսումնարանների ուսուցիչների ներկայութեամբ:

—

Մեր ընթերցողները գիտեն, որ Թիֆլիսի ձիաքաշի վերաբերութեամբ քաղաքային դումայի և Բօբիի մէջ կայացած համաձայնութեան մշակած դաշնագիրը ներկայացված էր Կովկասեան կառավարչապետին: «Кавказъ» լրագրի ասելով՝ Կառավարչապետը քննելով հարցը՝ գտաւ, որ քաղաքային կանոնադրութեան 1, 6, 7 և ուրիշ յօդուածների հիման վրա, քաղաքային ինքնավարութիւնը, աչքի առաջ ունենալով ազգաբնակութեան շահերը, պէտք է ազատ մրցութեան մէջ դնէր ձիաքաշի կապալով տալու գործը, մինչդեռ քաղաքային ինքնավարութիւնը, բանակցութիւն սկսելով միայն Բօբիի հետ, նը-պաստել է բելգիական Անոնիմ ընկերութեան շահերին: Ուստի քաղաքային դումայի այն որոշումները, որոնք վերաբերում են ձիաքաշի կապալով տալուն, պէտք է համարվեն ոչնչացած և դուման նորից պէտք է զբաղվի ձիաքաշի հարցով, մշակելով կապալի համար ընդհանուր ծրագիր և յայտարարելով այդ մասին որքան կարելի է լայն և ընդարձակ ծաւալով,, որպէս զի մրցողները բազմաթիւ լինեն և կարողանան քաղաքին տալ ձեռնտու պայմաններ:

—

Ինչպէս յայտնի է, Թիֆլիսի Դիդուբէ կոչված խօսքով «դէմիները»: Եւ այս վնասը, տեղեկութիւններին նայելով, այնպիսի հանգամանքների մէջ է ընդհանուր բերքի նկատմամբ, որ հացը մեր նահանգի կարիքից շատ կը լինի և հետևապէս էժան:

Սակայն կայ մի այլ հանգամանք, որը կարծիք է տալիս, թէ հացի գինը առատութեան չափով էժան չի լինի և դա Երևանի շուկան է, որը իսկապէս ազդում է ամբողջ նահանգի վրա իր գներով և արամադրութեամբ: Երևանի ժողովուրդը իր ուտելու հացը ստանում է Քանաքեռի վարելահողերից—Մուրադ-Թափայից, Եղուարդ գիւղից և մասամբ էլ Ղրխբուլաղի գիւղերից: Այս տարի այս տեղերին վնասը վնասին հետևեց. Մուրադ-Թափան ունի մօտ 1200 դեսեատին վարելահող, Եղուարդը՝ 4—5000 դեսեատին, երկու գիւղերն էլ տալիս են հիանալի բերք, ընտիր հաց և ամբողջ Երևանին պաշարահան հազարաւոր խալվարներ մշակող այս գիւղերը այնպէս վնասվեցին գարնան երաշտից, որ մանգաղ չեն դուրս բերելու դաշտը: Կարող էք երևակայել, որ 1000—1500 խալվար սերմը մնացել է հողի մէջ առանց բուսնելու. միւս կողմից, մայիսի 29-ին, մի քառորդ ժամ տեղացած կարկուտը այնպէս փչացրեց Ղրխբուլաղի ցանքերը, որ մի քանի տեղ դարձեալ մանգաղ չը պիտի դուրս հանեն խեղճ գիւղացիները: Այսպիսով Երևանին հաց տուող տեղերը մեծ վնասներ կրեցին, և որովհետև երևանցին սովոր է Մուրադ-Թափայի և Եղուարդի կամ Ղրխբուլաղի հացին, հետևապէս թանդ գնով էլ լինի՝ պէտք է առնի, ուստի և Երևանի շուկայում թանդ գներ կը լինեն, իսկ այդ հանգամանքը կազդի և միւս տեղերի վրա, թէպէտ, կրկնում ենք, ընդհանուր առմամբ հացի բերքը այս տարի առատ է լինելու: Ա.—Դօ

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կովկասի կառավարչապետ սենատոր գեներալ-ադիւտանտ Իշխան Գոլիցին ամսիս 15-ին գնալու է Կովկասի հանքային ջրերը և այնտեղից կը վերադառնայ Կօջոր ամարանոցը:

—

Թիֆլիսի քաղաքային դումայի ձայնաւորը Կոնստանդին Բէյտեր, հիւանդութեան պատճառով, բոլորովին հրաժարվեց ձայնաւորի կոչումից:

—

Մեզ խնդրում են յայտնել, որ այգեգործական ցուցահանդէսները պէտք է լինեն հետևեալ ամիսներին. Ստավրոպոլ քաղաքում՝ օգոստոսի վերջին և սեպտեմբերին: Բագու քաղաքում—սեպտեմբերի 1-ից մինչև 15-ը: Սուխում քաղաքում—սեպտեմբերի 15-ից մինչև հոկտեմբերի 15-ը: Քութայիս քաղաքում սեպտեմբերի 5-ի և հոկտեմբերի 20-ի մէջերքը:

—

Ինչպէս յայտնի է, Թիֆլիսի Դիդուբէ կոչված գործի յառաջադիմութեան համար այնչափ ապագայ կը գտնէ որքերու մատաղ հոգիներու մէջ, որ ժառդիր է միայն որբանոցամ գործ շարունակել, և գոցել միւս ցերեկօթիկ երկսեռ վարժարանը, որ 30 տարիէ ի վեր կուլ տուած է Պօրտ ընկերութեան ոսկիներ և սակայն չէ յաջողած իւր մէջ ձրի ուսում ստացող լուսաւորչական հայերու զաւակներէն գէթ հայերէն մէկը բողոքական դարձուցել, որովհետև եթէ այս դպրոցի աշակերտներէն մի քանիներ (10—15 հոգի) բողոքական անուն կը կրեն այժմ, կեղծաւորութեամբ լոկ, իրենց նիւթական շահեր պահպանելու համար է:

Կաթոլիկներ.—Շատ տարիներէ ի վեր կաթոլիկ բէռեր տեղ որջացած կը սպասէին, սակայն այս քանի տարվան մէջ մէկ հոգի անգամ չէին կրցած որսալ: Կերևի պատեհ առիթ կը սպասէին և ինչպէս ձեզ ծանօթ է յաջողեցան այդ առիթ ձեռք ձգել: Այժմէն չէ կարելի որոշել անոնց յաջողութեան չափը, դա կախում ունի ապագայ հունձքէն և մեր առաջնորդարանի ձեռք առնելիք միջոցներէն: Առ այժմ կաթոլիկ հայեր ունին առաջնորդարան մը, երկսեռ որբանոց մը, և երկսեռ երեք նախակրթարան մը 200 աշակերտներով: Այս նախակրթարաններուն ուսումնական վիճակը հիմա խիստ ստորին է թէև, բայց Անտոն վարդապետի ասածին նայելով, շուտով պիտի հասնին հայ և ֆրանսիացի մայրապետներ, Վենետիկեան վարդապետներ և Դոմինիկեան ֆրէռներ, որք հիմնելու են բարձրագոյն վարժարան մը:

Ահա համառօտ Վանայ կրթական և կրօնական արդի կացութիւնը: Ուրիշ տեղեկութիւնք հետզհետէ կուղարկենք:

*

## ՄԷՋ Վանայ կրթական և կրօնական վիճակին վրա, իբր միակ մխիթարական երևոյթ, այս վարժարան կրնանք ցոյց տալ:

Որբանոցներ.—Վանայ նահանգին մէջ պատրիարքարանի ծախքով բացված են չորս որբանոցներ, երեքն արական և մէկն իգական: Արականներ են. 1) Վարագայ վանուց որբանոց (թիւ ուսուցչաց երեք, թիւ որբերուն 70, ասոնց վրա աւելցան վերջերս կաթոլիկներու որբանոցէն խոյս տուող 19 որբեր, որոնք չէին հաճանցած պէտերու պահանջներուն): 2) Կարմրուորայ Վանուց Որբանոց (ուսուցիչ մէկ, թիւ որբերուն 32): 3) Աղթամարայ որբանոց (ուսուցիչ 2, թիւ որբերուն 25): Այս արական որբանոցներուն մէջ կաւանդուին շատ տարրական ուսումներ, գրել, կարդալ և հաշվել, կրօն և եկեղեցական երգեցողութիւն, և տղայք կը պարապեն երկրագործական աշխատութիւններով կամ տեղական մէկ երկու արհեստներով: Իսկ աղջկանց որբանոց կը պահուի քաղաքիս մէջ Սանդապատի Ս. Գրիգորի վանքին անունով. որբուհիներուն թիւն է 35, որոց կը դասախօսէ մէկ վարժուհի: Որբուհիներ կուսանին զանազան ուսումնարաններու հետ նաև ձեռագործ, ձև և կար: Այս բոլոր որբանոցներ կը հոգացվին մասամբ մը պատրիարքարանի նպաստներով (իւրաքանչիւրին ամսական 10 ռսկի, միայն Աղթամարին 12 ռսկի), վանքերու հասոյթներով և բարեսէրներու նուէրներով: Իւրաքանչիւր որբանոցն ունի իւր յատուկ հոգաբարձութիւնը: Եթէ այս հաստատութեանց վարիչներն ունենային փորձ և հմուտ պաշտօնեաներ, շատ արդիւնք կարելի էր սպասել ապագային:

Վանքեր.—Վանայ նահանգն ամենէն աւելի հարուստ է վանքերով, թէ չէն և թէ անչէն, սակայն չէն և հարուստ վանքեր, որոնք կրնային գիտութեան և կրօնի մի-մի վառարաններ լինել, այսօր բնաւ պիտանի չեն ազգին: Վանայ ծովակին չորս կղզիներէն երեք իրենց վրա ունին ամենահարուստ վանքեր՝ Աղթամար, Լիմ և Կտոց: Այս երեք վանքերու մէջ կան իրը 40 ձրիակեր վարդապետներ, բոլորովին անպիտան, երկու բառ քարող խօսելու անկարող, ագէտ, գռեհիկ և շատերն անբարոյականութեամբ հռչակաւոր: Այս վանքերն ունին հռչակաւոր և ընդարձակ կալուածներ, անոնցմէ իւրաքանչիւր, եթէ լաւ մատակարարվի, կարող է պահել 50 որբ. բայց, դժբախտաբար, յիշեալ անպէտ արեղաներ արգելք եղած են մինչև հիմա: Այս վանքերու մատակարարութիւն այնչափ յոռի է, որ պարտքի տակ կը գտնուին և շատն ալ կորսուելու վտանգին մէջ են: Զը գիտենք Աղթամար ինչու իւր ծախքով չի պահեր որբանոցը և պատրիարքարանէն նպաստ կընդունի: Ինչ եղան հանդուցեալ Խաչատուր կաթուղիկոսի դիրած ոսկիներ և ուր կը ծախվին արդի ահագին եկամուտներ և կաթուղիկոսի փոխանորդ Արսէն վարդապետի հաւաքած մեծամեծ գումար պտղիներ: Վարագայ, Կարմրուորի և Ս. Գրիգորի վանքեր, որոնք ևս որբանոցներ ունին և քաղաքիս մօտիկ են, յիրաւի աղքատ են և նպաստի կարօտ: Շատ վանքեր կան, որոնց մէջ դեռ երկու երեք տարի առաջ բնակութիւն կար, բայց այժմ ամայի լքուած են. յիշենք միայն հռչակաւոր Ս. Բարթողիմէոսի վանք ի Պալդաշէ, Հոգւոց վանք՝ Նօրատուզի մէջ, Սքանչելագործի վանք՝ Արծկէի մէջ, Մեծովքայ վանք Արճէշու մէջ և այլն և այլն: Ինչու Աղթամարայ, Լիմ, Կտոց անապատներու արեղաներ չեն երթար յիշեալ ամայի վանքեր. բայց այնչափ անպիտան են անոնք որ չեն ուզեր քիչ մը նեղուիլ և պատրաստի հաց թողուլ:

Երբեմն Վան բազմաթիւ արժանաւոր կղերականներ ունէր, այժմ յիշեալ վանական վարդապետներէն դատ ոչինչ ունի, և երբ ասոնց վիճակ այդքան ողբալի է, կը գուշակվի նաև քահանաներու վիճակն, որ երբէք մխիթարական չէ: Ահա թէ ինչու կաթոլիկ կղեր կը յաջողի այնչափ որսեր ընել Վանայ մէջ, ուր այսչափ ատեն ոչ մի միսիոնարի ջանք այնչափ արդիւնաւէտ չէր եղած: Քիչ օրէն տեղս պիտի հասնի Ներսէս եպիսկոպոս մեր նորընտիր հովիւ և իրեն հետ իբր աջակից կը բերէ Վահրիք վարդապետ. տեսնենք ինչ դարման պիտի խորհի դապետ. տեսնենք ինչ դարման պիտի խորհի կղերը բարձրացնելու համար իւր այնքան ընկած վիճակէն:

Բողոքական միսիոնարներ.—Տեղւոյս Ամերիկեան միսիոնարութիւնն ամբողջ Թիւրքիոյ մէջ ամենէն ճոխ գործ ունի. ունի ժողովարան մը, վարժարան մը (երկսեռ 250 աշակերտով), որբանոց մը 400-ի մօտ երկսեռ որբերով: Միսիոնարներ աւելի այժ կը տան այժմ իրենց որբանոցին և անոր ճիւղ եղող արհեստանոցներուն, որոնց մէջ որբեր կը պարապեն կտաւագործութեամբ, դարբինութեամբ, կօշկակարութեամբ և այլն: Թէ իրենց երկսեռ վարժարանին և թէ որբանոցին ուսումնական վիճակը շատ բարձր չէ,—կրօնական չոր ցամաք դաստիարակութիւնը մը, որ տեսակ մը ժոլեռանդներ և ապուշներ յառաջ կը բերէ, որ կը կազմէ միսիոնարաց իդէալը: Թէև կեղծաւորաբար հայոց եկեղեցին կը ղրկեն որբեր, բայց ամենն միջոցներով զանոնք կրօնափոխ ընել կաշխատին: Տեղւոյս այժմեան միսիոնարը հոգևոր գործի յառաջադիմութեան համար այնչափ ապագայ կը գտնէ որբերու մատաղ հոգիներու մէջ, որ ժառդիր է միայն որբանոցամ գործ շարունակել, և գոցել միւս ցերեկօթիկ երկսեռ վարժարանը, որ 30 տարիէ ի վեր կուլ տուած է Պօրտ ընկերութեան ոսկիներ և սակայն չէ յաջողած իւր մէջ ձրի ուսում ստացող լուսաւորչական հայերու զաւակներէն գէթ հայերէն մէկը բողոքական դարձուցել, որովհետև եթէ այս դպրոցի աշակերտներէն մի քանիներ (10—15 հոգի) բողոքական անուն կը կրեն այժմ, կեղծաւորութեամբ լոկ, իրենց նիւթական շահեր պահպանելու համար է:

Կաթոլիկներ.—Շատ տարիներէ ի վեր կաթոլիկ բէռեր տեղս որջացած կը սպասէին, սակայն այս քանի տարվան մէջ մէկ հոգի անգամ չէին կրցած որսալ: Կերևի պատեհ առիթ կը սպասէին և ինչպէս ձեզ ծանօթ է յաջողեցան այդ առիթ ձեռք ձգել: Այժմէն չէ կարելի որոշել անոնց յաջողութեան չափը, դա կախում ունի ապագայ հունձքէն և մեր առաջնորդարանի ձեռք առնելիք միջոցներէն: Առ այժմ կաթոլիկ հայեր ունին առաջնորդարան մը, երկսեռ որբանոց մը, և երկսեռ երեք նախակրթարան մը 200 աշակերտներով: Այս նախակրթարաններուն ուսումնական վիճակը հիմա խիստ ստորին է թէև, բայց Անտոն վարդապետի ասածին նայելով, շուտով պիտի հասնին հայ և ֆրանսիացի մայրապետներ, Վենետիկեան վարդապետներ և Դոմինիկեան ֆրէռներ, որք հիմնելու են բարձրագոյն վարժարան մը:

Ահա համառօտ Վանայ կրթական և կրօնական արդի կացութիւնը: Ուրիշ տեղեկութիւնք հետզհետէ կուղարկենք:

*

Թիֆլիսի օդերևոյթաբանական դիտարանը, «Торговопромышленная Газета» լրագրի ասելով, պէտք է այսուհետև ստանայ մշտական նպաստ։ Պետական խորհուրդը իր մայիսի 24-ի նիստում որոշել է. սկսած 1900 թուականից յատկացնել լրացուցիչ 1200 բուբլի մաղնիսագրական հետազօտութիւնները բարւոքելու նպատակով։

—

Վլադիկավկազում հիմնվում է մի նոր ընկերութիւն «Կրթական-դաստիարակչական զբօսանքներ և ճանապարհորդութիւններ» անունով, որի նպատակն է դպրոցի աշակերտների և դպրոցական հասակ ունեցող մանուկների համար զբօսանքներ ու ճանապարհորդութիւններ կատարել, փոքառու դաստիարակների հսկողութեամբ։

—

Քութայիսում, յունիսի 7-ին, տեղի ունեցաւ հետևեալ տխուր դէպքը. Գէօրգի Զիչուա և Մգելաձէ, բանկի ընտրութիւնների մասին ջերմ վիճաբանութիւնների ժամանակ, միմեանց հասցրին դաշոյնի ծանր վէրքեր, որոնցից առաջինը մեռաւ, իսկ երկրորդի դրութիւնը շատ վտանգաւոր է։

—

Թիֆլիսի քաղաքային դուման յունիսի 9-ի իր նիստում ընտրեց յատուկ յանձնաժողով, որ մշակի հանդուցեալ Ն. Ե. Զուբալովի կտակով բացվելիք ապաստարանի ծրագիրը։ Ապաստարանի մէջ մի մասը պէտք է լինեն կաթոլիկներ, միւս մասը—ուղղափառներ և երրորդ մասը հայ լուսաւորչականներ։

—

ԴԱՆԶԱԿԻ գաւառի Հաջիքէնդ աւանից հեռագրում են «Кавказъ» լրագրին, յունիսի 9-ից, հետևեալը. «Երէկ Սիբիրից փախած Հումբաթ Նալաֆ-զուլի աւազակը, հալածվելով պրիստավ Վ.օրբեօվից, թաղնվեց Հաջիքէնդից վերև գտնվող մի խրճիթի մէջ, որտեղ երկար հրացանաձգութիւնից յետոյ՝ սպանվեց։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Օրիորդ Վարդիթերի խումբը յունիսի 3-ին ներկայացրեց «Փարիզի շրջմոլիկը» կօմէդիան։ Ժօզէֆի դերերը դերեցիկ կերպով կատարեց օր. Մարի-Հրանոյշ։ Մենք նրան մի անգամ էլ տեսել ենք այդ դերում, այժմ նկատելի էր աւելի մշակումն. նա հասկանում է այդ դերը և չարաճճի տղայի անմեղ չարութիւնները կատարեց չարաճճիներիցն էլ բնական։ Այն տեղում, ուր յիշում է իր հօր թողած պատուէրը և իր պարտքը դէպի մայրը և թշուառացած քոյրը, այնքան լաւ կատարեց, որ շատերի աչքերում արտասուք երեւաց։ Միւս դերակատարներից լաւ էր ժենեռալ Մօրինի դերում, պ. Ստեփանեան։ Ամեդիէզը, Մօրինի դերում, պ. Օհանեան թոյլ էր։ Այժմեան խումբը լուրջ պիեսների համար անպատրաստ է. ճիշդ է, Ֆելէկեան քոյրերը լաւ ոյժեր են որոշ դերերում, բայց միւսները թոյլ են. օրինակ, դրամատիքական դերակատար չը կայ սրանց մէջ, թէև երկրորդական դերերի համար վատ չեն։ Այս բանին ենք վերագրում մասամբ էլ ներկայացումների անպէտքութիւնը մուտքի կողմից, թէև մեր հասարակութիւնն էլ անտարբեր է։ Այսօրվայ ներկայացումն այլ ևս տեղի չի ունենայ, թէև աֆիշներ տարածվեցին, և խումբը ուզում է գնալ Ալէքսանդրոպոլ»։

—

Բօրչալուի գաւառի ՇՆՈՂ գիւղից մեզ գրում են. «Տեղացոյ յորդ անձրևների հետ մեր գիւղում կարկուտ եկաւ և հողին հաւասարեցրեց այգիների և արտերի մի մասը, որի վնասը հաշուում են մօտաւորապէս 8000 բուբլի։ Բացի դրանից, գիւղի միջով հոսող առուակը հեղեղից յորդանալով խեղդեց երեք 6—7 տարեկան երեխայ, իսկ սարերից թափվող դետերը վնասել են մի քանի այգի և խեղդել երեք գոմէշ և մի քանի եզ։ Այս բոլորի մասին տեղեկագրվեց Շուլավերի վարչութեան։»

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Կ. Պօլսից «Temps» լրագրին հեռագրում են, որ մեծ պետութիւնների դեսպանները Բ. Դրանը մի յայտագիր ուղարկեցին, որի մէջ բողոքում են արտասահմանեան ապրանքների վրա դրված մաքսահարկերի դէմ Գալիպօլում։ Այդ յայտագրի մէջ, բացի դրանից, պետութիւնները յայտնում են, որ Թիւրքիայի այդպիսի ձեռնարկութիւնների մէջ առևտրական դաշնագիրների խախտումն են տեսնում։

—Կ. Պօլսում, «Berliner Tageblatt» լրագրի ասելով, յամառութեամբ պտտում է այն լուրը, թէ գերմանական դեսպան ֆօն-Մարշալ, որ նորերս արձակուրդ ստացաւ, այլ ևս չի վերադառնայ Կ. Պօլիս՝ ստանձնելու իր պաշտօնը։ Այդ լուրը դեռ ևս պաշտօնապէս չէ հաստատված, բայց և չէ հերքված։

—Պրիլէպում, Մակեդոնիայում, տեղի ունեցած արիւնահեղ ընդհարման մասին Մօնաստիրի բօլգարական առևտրական գործակալը հաղորդում է հետևեալը. «Տեղական ոստիկանութիւնը քաղաքից դուրս գտաւ դանակով վիրաւորված մի բօլգարացու, որը ասեց, թէ իրան վիրաւորեցին իր մի քանի հայրենակիցները, որոնց հետ նա կռուի էր բռնվել։ Այդ բօլգարները, վիրաւորվածի ասելով, Պրիլէպ էին ուղարկված պրօպագանդա անելու և ապստամբութիւն առաջացնելու համար։ Այդ պատճառով ոստիկանութիւնը շատ խուզարկութիւններ կատարեց և շատերին ձերբակալեց, որոնց ժամանակ մի բօլգարացի հրացանաձգութիւն սկսեց ոստիկանների դէմ։ Դրա հետևանքը այն սարսափն էր, որի ժամանակ քրիստոնեայ և մահմեդական ազգաբնակութեան հին թշնամութիւնը արիւնահեղ ընդհարումների պատճառ դարձաւ։ Շատ վիրաւորածներ կան։ Պրիլէպ եկած մօնաստիրեան վալին հրամայեց արժատախիլ անել դրա նման անկարգութիւնները»։

—Նախկին մինիստր Իվ Գիւօ Siécle» լրագրում ասում է, որ շատ հեշտ է պարլամենտում գտնել տասերկու մարդիկ, որոնք կը կարողանան 1) վճռաբեկ ատեանի վճիռը մինչև վերջը հասցնել. 2) ենթարկել բոլոր քաղաքացիներին ընդհանուր օրէնքին և 3) պատժել դաւադիրներին՝ հանրապետութիւնը անիշխանութիւնից ազատելու համար։

—Կէժանսօ «Aurore» լրագրում գրում է Պուանկարէի մասին. «Ես Պուանկարէի մէջ երկրորդ Դիւպիւիին եմ տեսնում, միայն աւելի ազնիւ, սակայն աւելի անվստահ և անվճռական»։

—«Berliner Tageblatt» լրագրի Պարիզի թղթակիցը հաղորդում է, որ Դիւպիւիի մինիստրութիւնը ընկնելուց յետոյ, նոր մինիստրութիւն կազմելու համար դիմեցին նախ Կոնստանին, որը այժմ վարում է ֆրանսիական դեսպանի պաշտօնը Կ. Պոլսում, բայց նա մերժեց այդ առաջարկութիւնը։ Նա յայտնեց, որ ինքն շատ լաւ է զգում իրան Բօսֆորի ափերում, և բոլորովին ցանկութիւն չունի վերադառնալ Ֆրանսիա, մանաւանդ այսպիսի «տաք մթնոլորդի» ժամանակ։ Կոնստանի ասելով, Պարիզում անկարելի է ձեռք բերել ոչ փառք, ոչ էլ երախտագիտութիւն։ Նա չէ մոռացել այն ապերախտութիւնը, որ ցոյց տուին նրան բուլանժիզմի դէմ կռուելու առիթով։ Կոնստան աւելացրեց, որ ինքն շատ ծեր է պատերազմական դիրքի համար, որը պահանջում է այժմեան առաջին մինիստրի պաշտօնը։ Այնու ամենայնիւ, Կոնստանի այդ բոլոր առարկութիւնները անկեղծ չեն։ Նա կամ սպասում է, որ աւելի շատ խնդրեն իրան, կամ թէ հրաժարվում է առաջին մինիստրի պաշտօնից, որպէս զի հնարաւորութիւն ունենայ աւելի բարձր դիրք բռնելու։ Մերժումը Պուանկարէի շանսը աւելացրեց։ Հանրապետութեան նախագահը կանչեց նրան Ելիսեան պալատը և երկար ժամանակ խորհրդակցեց նրա հետ։ Միևնոյն ժամանակ Լուբէ խընդրեց պաղամաւորների ժողովի նախագահ Դեշանելին, որպէս զի վերջինս գործ դնէ Պուանկարէի վրա իր ազդեցութիւնը, որ նա չը մերժի մինիստրութեան կազմակերպութեան գործը։

## „ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

9 յունիսի

ԿԱՊՇՏԱԴ։ Այստեղի իշխանութիւնը ժամանակաւորապէս վերացրեց զօրքի համար հայթայթվող առարկաներից մի քանիսի պայմանագրով տալը, պատճառաբանելով այդ նրանով, որ զօրքերը պատրաստ պէտք է լինեն, հէնց որ հրաման կը ստացվի, ճանապարհ ընկնել դէպի Կապշտադ։ Որ զօրքերը պատրաստվում են դաշտային ծառայութեան, կարող է ապացոյց լինել և այն, որ լանկաշիրեան գնդի մասերը, որոնք գտնվում են Վինբերգում և Շտեղէնբաշում, միացել են արդէն Կապշտադում գտնվող գնդի հետ։

ՀԵԼՍԻՆԳՖՕՐՍ։ Աբօ և Տամերֆօրս քաղաքների մէջ գտնվող երկաթուղու բոլոր կայարաններում ժողովվել էին գիւղացիների ահագին խմբեր։ Մեծ Իշխանի գնացքը Տամերֆօրս հասաւ յունիսի 7-ին, երեկոյեան 10 ժամին։ Յունիսի 8-ին, առաւօտեան, Մեծ Իշխանը տեսաւ նոր կառուցանվող ռուսաց եկեղեցին և շատ գործարաններ։ Այսօր առաւօտեան, Մեծ Իշխանը կը մեկնի Նիկոլայստադ, որտեղից «Էլէկէն» շոգենաւով կը մեկնի դէպի չվեդական Ումէօ նաւամատոյցը։

ԽԱԲԱՐՕՎՍԿ։ Մեծ պատրաստութիւններ են տեսնվում այս տարի Սապօնիայի թագաժառանգի չափահասութեան տօնը կատարելու համար։ Թագաժառանգ Օսիխտօ Խորունօվիա ծնվել է 1879 թվի օգոստոսի 31-ին։

Այս տարի Սապօնիան 80 ուսանողներ է ուղարկում Եւրոպա, 50-ի փոխարէն։

ՄՕՍԿՎԱ։ Մօսկվա-Կազանեան երկաթուղու վարչութիւնը որոշեց տալ Սիւժիմի գիւղացիներին 30,000 բուբլի այն բանի համար, որ գիւղում հրդեհ է առաջ եկել շոգեկառքի կայծից։ Գիւղացիները այրված տների համար 50,000 բուբլի են պահանջում։

ՀԱԱԳԱ։ Այն ենթայանձնաժողովը, որը քննում էր Բրիւսէլի կօնֆերէնցիայի արձանագրութիւնը, ընդունեց նոր խմբագրութեամբ այդ արձանագրութեան 6, 7 և 8 յօդ. և ապա անցաւ այն երեք յօդուածների քննութեան, որոնք վերաբերում են պատերազմող կողմերի իրաւունքներին և պարտաւորութիւններին թէ պատերազմողների և թէ ոչ-պատերազմողների։ Ռուսաց պատգամաւոր Մարտէնս ընդդեմ այն կանոնները, որոնցով թեթևացնվում են մի կողմից ազգաբնակութեան զոհերը, իսկ միւս կողմից պակասեցնվում են պատերազմի սարսափները։ Բրիւսելի կօնֆերէնցիան ի նկատի չէ ունեցել ազգաբնակութիւնը զրկել պաշտպանվելու իրաւունքից, նմանապէս մտադիր չէ եղել ամեն մի դէպքի համար առանձին կանոններ յօրինել։ Մարտէնս կարդում է մի զեկուցում, որի նպատակն է ջրել բոլոր թիւրիմացութիւնները։ Զեկուցման մէջ որոշված է այն, ինչ որ կարելի է անել, ու բաց են թողված այն հարցերը, որոնց այժմ անհնարին է վճռել։ Բուրժուա առաջարկեց Մարտէնսի զեկուցումը միացնել կօնֆերէնցիայի պաշտօնական թղթերին։ Երկար վիճաբանութիւններից յետոյ Մարտէնսի զեկուցումը ընդունվեց յանձնաժողովի կողմից։ Ապա ընդունվեցին 10 և 11 յօդուածները։

ՊԱՐԻԶ։ Այսօր, կէսօրին, նախագահ Լուբէ հեռագրեց Հաագա Բուրժուային, առաջարկելով նրան նոր մինիստրութիւն կազմել։ Օրվայ ընթացքում Լուբէ խօսակցում էր Բրիսսօնի հետ։ Խօսակցութիւնը խորհրդակցութեան բնաւորութիւն ունէր։

ՊԱՐԻԶ։ Բուրժուա հեռագրով յայտնեց Լուբէին, որ կը վերադառնայ Պարիզ վաղը, առաւօտեան։

ՊԱՐԻԶ։ Լրագիրներից շատերը միայն այս կարծիքն են յայտնում, թէ Բուրժուայի հետ խորհրդակցութիւնը սեռ ազդեցութիւն կունենայ ճգնաժամի վրա, բայց հակառակ կարծիքներ են յայտնում ելքի մասին։

ՊԱՐԻԶ։ Բուրժուա հասաւ այսօր առաւօտեան և 8 ժամ 45 րոպէին Դէլկասէի հետ զբաղեցաց Ելիսեան պալատը։ Նախագահ Լուբէի հետ Բուրժուա խօսակցեց երեք քառորդ ժամ, ապա այցելեց Դէլկասէին, Բրիսսօնին և մի քանի ուրիշ քաղաքական բարեկամներին։ Այսօր և եթ նա վերադարձաւ Ելիսեան պալատը։ Շատ կասկածելի է համարվում, որ նա համաձայնվի յանձն առնել նոր մինիստրութեան կազմակերպութիւնը։

ՊԱՐԻԶ։ Լուբէի հետ տեսակցութեան ժամանակ Բուրժուա ասեց, որ դրութիւնը այնպէս կրիտիքական չէ, որպէս նկարագրում են մի քանի լրագիրները։ Արտասահմանում ֆրանսիական անցքերին այդպիսի յուռեռեսութեամբ չեն վերաբերվում։ Հաագայում կատարվող գործը Բուրժուա համարում է ամենադեղեցիկ գործերից մէկը, մի և նոյն ժամանակ այնպիսի մի գործ, որը ամենալաւ հետևանքներ կարող է ունենալ թէ Ֆրանսիայի և թէ մարդկութեան համար։ Իր գործին նա մեծ սիրով ձեռք զարկեց և համոզված է այն բանում, որ իր ջանքերը իզուր չեն կորչի։ Նա իսկական վիշտ կը զգար, եթէ հարկադրված լինէր հրաժարվելու իր միսսիայից։

ՊԱՐԻԶ։ Բուրժուա յայտնեց Լուբէին, թէ չէ կամենում իշխանութեան գլուխ կանգնել և կամենում է վերադառնալ Հաագա, բայց ինքն կը տեսնվի իր քաղաքական բարեկամների հետ՝ նրանց համար նոր մինիստրութեան գործը հեշտացնելու նպատակով։ Կարծում են, որ վերջ ի վերջոյ այդ յանձնարարութիւնը կը տրվի Դէլկասէին։

Կ. ՊՕԼԻՍ։ Բիթլիսի վիլայէտում ահա արդէն մի քանի օր է, որ արիւնահեղ ընդհարումներ են տեղի ունենում քրդական երկու ցեղերի հետ, այնպէս որ այդ ընդհարումների ժամանակ կրակի ճարակ դարձան մի քանի հայ գիւղեր։

ԲԵՐԼԻՆ։ Բէյխստագը քուէարկեց լրացուցիչ կրէդիտ հարաւովկիանական կղզիները ձեռք բերելու համար։ Դրա հետ կապ ունեցող օրէնքը փոխառութեան վերաբերմամբ, նոյնպէս և առևտրական համաձայնութիւնը Սպանիայի հետ ընդունվեցին և քուէարկվեցին առաջին և երկրորդ ընթերցանութիւնների ժամանակ։

ԲԵՐԼԻՆ։ Բէյխստագը ձայների շատ խոշոր մեծամասնութեամբ ընդունեց երրորդ ընթերցանութիւնից յետոյ այն օրինագիծը, որ վերաբերում է առևտրական յարաբերութիւններին Անգլիայի հետ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հրատարակված է Բարձրագոյն հրաման ձիագողութեան համար պատասխանատուութիւնը սաստկացնելու մասին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Աքսորը վերացնելու համար, այս տարվայ մայիսի 6-ին, արդարադատութեան մինիստրի նախագահութեամբ, Բարձրագոյն հաստատված յանձնաժողովի մէջ նշանակված են՝ Տագանցէվ և Ֆօյնիցկի սենատօրները, բանտային վարչութեան գլխաւոր կառավարիչ Սալօմոն, արդարադատութեան մինիստրութեան կօնսուլտացիայի անդամներ՝ Մէչչանինով և Զապլին, ներքին գործերի մինիստրութեան կողմից—ներքին գործերի մինիստրի օգնական իշխան Օբօլէնսկի, ֆինանսների մինիստրութիւնից—մինիստրի օգնական Կոկովցէվ, պետական կօնտրոլի կողմից—խորհրդի անդամ Տիչինօ։ Բացի դրանից, յանձնաժողովի նիստերին կը մասնակցեն, առանձին հրաւէրով՝ պալատի մինիստրութիւնից—Դուրասով, երկրագործութեան և պետական կալուածների մինիստրութիւնից—մինիստրի օգնական բարօն Իսկուլ-ֆօն-Գիլդէնբանդ, հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութիւնից—Երմօլով, զինուորական մինիստրութիւնից—գեներալ-մայոր Լուզանով, ծովային մինիստրութիւնից—Վինօգրադով և պետական դիւանատնից — Պետական Խորհրդի ստատս-սեկրետարի օգնական Դէրիւժինսկի։ Յանձնաժողովի գործերի կառավարութիւնը Բարձրագոյն յանձնարարված է բանտային վարչութեան գլխաւոր կառավարչին՝ կենտրոնացնելով այդ վարչութեան մէջ յանձնաժողովի գործավարութիւնը։ Յանձնաժողովի առաջին նիստում, յունիսի 8-ին, քննվեց հարցերի ցանկը։ Մի և նոյն ժամանակ յանձնաժողովը որոշեց, թէ ինչ հերթով և ինչ կարգով պէտք է լուծվեն այդ հարցերը, և որոշեց, որ ամենից առաջ պէտք է մշակել դատաստանական աքսորը վերացնելու հարցը և այն դէպքում, երբ պատժից յետոյ հասարակութիւնները չեն ընդունում պատժված անձանց իրանց շրջանում, նոյնպէս և տաժանակիր աշխատանքների վերակազմութեան հարցը։ Յանձնաժողովը վճռեց վերսկսել իր նիստերը արձակուրդներից յետոյ, ներկայ տարվայ աշնանը։

Բարձրագոյն հաստատված յանձնաժողովի նախագահից՝ աքսորը վերացնելու համար ձեռնարկութիւնների մասին։

Յանձնաժողովի քննութեանը, ի միջի այլոց, ենթակայ են հետևեալ հարցերը. 1) դատարանի նշանակած աքսորը փոխարինել ուրիշ համապատասխան պատիժներով. 2) մէչչանների և գիւղական համայնքների վճռով եղած վարչական աքսորը վերացնելու կամ սահմանափակելու մասին. 3) տաժանակիր աշխատանքների տեղը վերակազմելու մասին. 4) այժմ Սիբիրում գտնվող աքսորականների վիճակը բարւոքելու մասին. 5) ստիպողական հասարակական աշխատանքներ և բանտարական տներ հիմնելու մասին, որպէս առաջին առնող և պատժական միջոցներ։ Շատ լաւ հասկանալով, որ պետական և հասարակական մեծ նշանակութիւն ունեցող այդ հարցերի լիակատար և բազմակողմանի քննութեան համար շատ լաւ կը լինէր օգտվել այն անձանց տեղեկութիւններով և ցուցմունքներով, որոնք տեսականապէս ուսումնասիրել են այդ հարցերը, նոյնպէս և Ռուսաստանում և արտասահմանում այդ գործի դրութեան հետ գործնականապէս ծանօթ անձանց,—յանձնաժողովի նախագահը յայտնում է ի գիտութիւն բոլորի, որ յանձնաժողովը ջնորհակալութեամբ կընդունի ամեն տեսակ հաղորդագրութիւններ վերոյիշեալ առարկայի մասին։ Այդ հաղորդագրութիւնները, որոնց ձևը և ծաւալը ամբողջապէս կախված է կազմողների հայեցողութիւնից, պէտք է ուղարկվեն յանձնաժողովի գործերի կառավարչի, բանտային վարչութեան գլխաւոր, դէյստվիտելնի ստատսկի սովէտնիկ Ալէքսանդր Պետրովիչ Սալօմոնի անունով, հետևեալ հասցէով. Петербургъ, главное тюремное управленіе.

ՍՏՕԿՀՕԼՄ։ Սալտսիօբադէն ծովային կուրորտում, Ստօկհօլմի մօտ, Ստօկհօլմ քաղաքը ճաշուեց ի պատիւ հիդրօգրաֆիական և բիօլոգիական կօնգրէսի։ Գլխաւոր բուրգօմիստր բարօն Տամմ օտար թագաւորների կենացն առաջարկեց։ Բրիտանական դեսպանը խմեց Օսկար թագաւորի կենացը։ Ապա Տամմ բաժակ բարձրացրեց ի պատիւ կօնգրէսի։ Կօնգրէսի անդամ դօկտօր Գէրվիդ ջնորհակալութիւն յայտնեց Ֆրիտիօֆ Նանսէնին կօնգրէսի նպատակներին նրա արած ծառայութիւնների համար։

ԱԼԷՔՍԱՆԴՐԻԱ։ Ժանտախտի դէպքերի ընդհանուր թիւը հասնում է 34-ի. 18 հիւանդացածներ մեռան, 11 հոգի առողջացան։ Հինգշաբթի օրվանից հիւանդանալու ոչ մի դէպքի մասին չեն հաղորդում։

ՎԻԵՆՆԱ։ Կայսրի առողջական դրութիւնը այնքան բարւոքվեց, որ ցերեկվայ մեծ մասը նորին մեծութիւնը անկողնում չէր պառկած, այլ առաւօտեան մինչև անգամ ընդունեց մի քանի անձանց, որոնց թւում Միւնխէնից վերադարձած Ֆրանց Ֆէրդինանդին։

ՌՈՒԴԱՊԷՇՏ։ Երկրի շատ տեղերից հաղորդում են, որ անցեալ օրը և երէկ տեղատարափ անձրևներ եկան։

ԲՕՄԲԷՅ։ Խռովութիւնները հարաւային Հընդկաստանից տարածվեցին և Տրավանկօրում։ Ապստամբները ստիպեցին ոստիկանութեանը յետ քաշվել, յափշտակեցին զէնքը և պատերազմական պաշարները և անգութ կերպով վարվեցին ազգաբնակութեան հետ։ Սամբօղրադում այրվեցին 450 տներ։

ԲԷԼԳՐԱԴ։ Յունիսի 2-ին և 3-ին սերբիական հողի վրա տեղի ունեցած ընդհարումների ժամանակ սպանվածների թիւը չէ որոշված, բայց նրանք, ըստ երևոյթին, բաւական շատ են երկու կողմից էլ։ Գիշերվայ ընթացքում թիւրքերը գաղտնի կերպով տեղափոխեցին իրանց վիրաւորվածներին Պրիշտին. սպանվածներին ճանապարհին թաղում էին։ Սերբիական պաշտօնական շրջաններում յայտարարում են, որ այժմ հաստատված է, որ յարձակման ծրագիրը պատրաստել էր մի մայոր և մի քանի ուրիշ թիւրք օֆիցէրներ, որոնք այդ նպատակով հաւաքվում էին խորհրդակցութեան համար Սիկլանց գիւղում, ալբանական մի յայտնի աւազակի տան մէջ։

ԲՈՒԽԱՐԷՍՏ։ Երէկ 1500 գիւղացիներ, որոնց մի մասը զինաւորված էր, աշխատում էին, ինչպէս հաղորդում է «Ռումինական գործակալութիւնը, մտնել Սլատինա քաղաքը՝ այնտեղի պարլամենտական ընտրութիւնների դէմ բողոքելու պատրուակով, որոնց ժամանակ անաջողութեան հանդիպեց Բօգդան Պիտէշտի անունով մէկը, որ անիշխանական ձգտումների համար աքսորված էր Ֆրանսիայից։ Ձօրքը յորդորում էր նրանց ցրվել, բայց գիւղացիները յարձակվեցին զինուորների վրա քարերով և փայտերով, այնպէս որ մի քանի մարդիկ վիրաւորվեցին։ Ձօրքերը տեսնելով որ գիւղացիները չեն ցրվում, սկսեցին հրացանաձգութիւն, առաջ օդում, ապա յարձակվողների վրա։ Նրանցից շատերը վիրաւորվեցին, մի քանիսները — մահացու կերպով։ Վերջի վերջոյ կարգը վերականգնվեց։ Անկարգութիւն անողները ձերբակալվեցին։ Քննութիւնից երևաց, որ ապստամբութեան սկզբնապատճառը, Բօգդան Պիտէշտին էր, որը անցեալ ձմեռը սոցիալական շարժման գլուխ էր կանգնած։

10 յունիսի

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողով։ Ունդդէմ մտցրեց նախագիծ պատերազմական պատրաստութիւնների մասին, պահանջելով 4 միլիոն ֆունտ փոխառութիւն պաշտպանութեան նպատակների, զօրանոցների համար Հալիֆակսում, Գիբրալտարում, Մալտայում, Վէյ-Խայ-Վէյում։

ԲԵՐԼԻՆ։ Բէյխստագ։ Բիւլօվ բացատրում է Կարօլինեան կղզիները ձեռք բերելու նախագծի մոտիվները և պնդում է, որ նրանց ձեռք բերելը լրացնում է Գերմանիայի կալուածները Մեծ ովկիանոսում։ Կղզիները տնտեսական կողմից շատ ընդունակ են զարգացման. հողը արդաւանդ է։ Գինը շատ չափաւոր է։ Ծրագիրը ընդունված է։

ՊԱՐԻԶ։ Բուրժուա երեկոյեան դրականապէս հրաժարվեց կաբինէտը կազմելուց։ Լուբէ վաղը կը կանչէ մի ուրիշին, շատ հնարաւոր է, որ Վալդէկ-Ռուսսօին, որը, ինչպէս ասում են, տրամադիր է վերանորոգել բանակցութիւնները նոր հիմքերի վրա։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողով։ Համարեա հինգ ժամի վիճաբանութիւններից յետոյ, Ունդդէմի առաջարկը ընդունվեց 241 ձայնով ընդդէմ 66-ի։

## ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՑԱՑՏՆՈՒՄ Է

—

ԿԱՐՍ. Տ. Ե. Դժբախտաբար, չը կարողացանք հրատարակել։

ԼՕՆԴՕՆ. Զարմայր. Ձեր վերջին նամակը անկարող եղանք տպագրել։

ԲԵՐԼԻՆ. Է. Շնորհակալութիւն ուղարկածների համար։ Շարունակեցէք, խնդրում ենք. հայ ընթերցողի համար հետաքրքրական երևոյթների պակասութիւն չէ կարող լինել Եւրօպայում։

ԵՐԵՒԱՆ, Ա—Դօ։ Պատկերը դեռ չենք կարդացել. նիւթերի առատութիւնը հարկադրել է տալիս հերթ պահպանել։ Ձեր նամակը չը կարողացանք տպագրել։

ՇՈՒՇԻ. ***։ Պօլեմիկական ձևը պէտք է թողնել. եթէ դուք տուած լինէիք փաստական տեղեկութիւններ, այնպէս որ մեր ընթերցողը կարողանար մի որոշ հասկացողութիւն կազմել, մենք կօգտվէինք այդպիսի նիւթից։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

## ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

### ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

| № 1 գնացքը։ | | № 3 գնացքը։ | |
|---|---|---|---|
| Բաղուից դուրս է գալիս ցեր. | 4 ժ. 15 ր. | գեշ. | 12 ժ. 20 ր. |
| Թիֆլիս է հասնում առ. | 8 ժ. 40 „ | երբ. | 6 „ 38 „ |
| Թիֆլ. դուրս է գալիս „ | 9 „ 10 „ | երբ. | 7 „ 37 „ |
| Բաթում է հասնում երբ. | 8 „ 32 „ | առ. | 8 „ 12 „ |

| № 2 գնացքը։ | | № 4 գնացքը։ | |
|---|---|---|---|
| Բաթումից դուրս է գալիս առ. | 9 ժ. 15 ր. | երբ. | 9 ժ. 05 ր. |
| Թիֆլիս է հասնում երբ. | 8 ժ. 53 „ | առ. | 9 „ 45 „ |
| Թիֆլիսից դուրս է գալիս „ | 9 „ 23 „ | „ | 11 „ 32 „ |
| Բաղու է հասնում ցեր. | 1 „ 04 „ | „ | 6 „ 15 „ |

### ԴԻԼԻԺԱՆՍՆԵՐ

Հենց հոգու համար

| | |
|---|---|
| Թիֆլիսից դուրս է գալիս 7 ժ. առ. | 9 ժամ. առ. |
| Գիշերում է Մլետում | Պասանաուր |
| Վլադիկավկազ հասնում է 7 ժ. 20 ր. երբ. | 9 ժ. 20 ր. երբ. |
| Վլադ. հոգու համար (չեն գիշերում) | |
| Թիֆլիսից դուրս է գալիս 1 ժ. ցերեկ. | 7 ժ. երեկ |
| Վլադիկավկազ հասնում է 3 „ 25 ր. երբ. | 9 ժ. 50 ր. երբ |

### ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.

Կ. Մ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. կանանց հիւանդ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—1¼—2¼ ժ. ներքին և միասեռական հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Վ. Մ. ՄԱԽՎԻԼԱՁԷ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ.

Ա. Ն. ՇԳԱԿՕՎԱԿԻ—6—7 ժ. նեարդային (ելեկտրաբուժութիւն), վեներական և մորթի հ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—6½—7 ժ.

Տ. Ի. ԲՈՒԴԵՆԿՕ հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է առնում մէզի, խիպ, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

138—151 Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ԱՄԵՆԱՑԱՑՏՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ



ՐՕՅԵԱԼՆԵՐ

ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ

ՖԻՍ-ՀԱՐՄՕՆԻՈՒՄՆԵՐ, ՋՈՒԹԱԿՆԵՐ, ԿԻԹԱՌՆԵՐ, ՖԼԷՅՏՆԵՐ, ԿԼԱՐՆԵՏՆԵՐ, ՁԱՅՆԱԽԱՁԵՐ, ԼԱՐԵՐ, ԵՒ ԱՅԼՆ, ԵՒ ԱՅԼՆ։



Բոլոր տեսակ գործիքների համար գինը կարելի է վճարել մաս-մաս։

ՆՈՐ-ՊՐԷՅՍԿՈՒՐԱՆՏՆ
ուղարկվում է ձրի։

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՁԱՅՆԱԽԱՁԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ-ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ

ԴԷՊՕ
Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ
Մատակարար Կայսերական Երաժշտական Ընկերութեան

Музыкалное депо Б. М. Мириманіана,
ТИФЛИСЪ.
Дворцовая ул., д. Т. Д. З. Банка.
(չ.) 9—20

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ԳՐՔԵՐԸ

Զ. Ս. ՄԻԼԼ՝ Ազատութեան մասին, գինը 1 ր. 20 կոպ., ճանապարհածախսով։

Ս. ԱՒԵՏԻՔԵԱՆ՝ Իրլանդիայի դատը, գինը 80 կոպ., ճանապարհածախսով։

Դիմել՝ Թիֆլիս, Կենտրոնական դրավաճառանոցին, կամ՝ Մոսկվա, Садовая-Сухаревская, д. и кв. Братановскаго, г-ну Мамикону Геворгіану.
5—5

Լայպցիգի հայ ուսանողների ճեմարանական ընկերութիւնը խնամարհաբար խնդրում է իր այն հին անդամներին, որոնք իրանց ուսանողութեան ժամանակ ընկերութեան դրամարկղին պարտ են մնացել և վերցրած դրամական պարտքը մինչև այժմ չեն վերադարձրել, չը նայելով ընկերութեան լրագրական յայտարարութիւններին և դիմումներին՝ շտապեն անյապաղ իրանց պարտքը վճարել։ Հակառակ դէպքում ընկերութիւնը ստիպված կը լինի ուրիշ խիստ միջոցի դիմել։ Դրամը պէտք է ուղարկել հետևեալ հասցէով. Leipzig-Gohlis. Doelnitzerstr, 2. Herrn stud. Phil S. Kotscharjanz.
3—3

Տաճկահայոց գաղթականութեան հոսանքին հետ ընկնելով Թիֆլիս և լինելով արհեստաւոր, ես, մի ժամանակ առանց մէկին ձանձրութիւն տալու, պահպանում էի կեանքիս գոյութիւնը։ Բայց անգութ բաղդը հարուածեց ինձ. ես հիւանդացայ և երկար ժամանակ անկարող էի աշխատել. ծախսեցի իմ սև օրվայ համար պահած կօպէկներս և դարձեալ չառողջացայ։ Ահա այս հիւանդութեան մէջ, ամեն կողմէ յոյսս կտրած, դիմում եմ բարեգործներին և խնդրում, որ օգնեն ինձ առողջանալ և հայրենիք վերադառնալ։ Հասցէ՝ «Մշակի» խմբագրատանը։ 2—2

ԲԺՇ. ՎԱՀ. ԱՐԾՐՈՒՆԻՆ,

տեղափոխվելով ջրերը (Պեատիգօրսկ), դադարեցնում է իր ընդունելութիւնը մինչև սեպտեմբերի 1-ը։

Հասցէն՝ Пятигорскъ. Верхный бульваръ, надъ аптекой Рахмалевича. 8—10

Լոյս տեսաւ
ՑԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՑԻ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԳԻՆՆ Է 50 ԿՕՊ.

Դիմել Թիֆլիսի դրավաճառներին կամ հեղինակին՝ Тифлисъ, Чавчавадзевская, д. Маркарова № 25-а, Բաղումի դիմել Хидекель-ի դրավաճառանոցին, ուր վաճառվում է նոյն հեղինակի

„ՀԱՆԱՔ ՈՒ ԴԱՆԱԿ“

հրատարակութեան I գրքոյկը, գինն է 30 կոպ.։
2—5

Ա. ԱՍՄԱՆ

„ՆՈՒԱԳՆԵՐ“

Գինն է 10 կոպէկ

Դիմել՝ A. H. Asman. Tauris—Perse.
5—10

Կովկասի ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ գրադարան-ընթերցարանը

(Միջին փողոց, տ. Տէր-Աստուրովի, Աղեքսանդրեանի մագազինի գլխին), բաց է առաւօտեան ժամը 9—2 և երեկոյեան ժամը 5—9։ Ստացվում են մայրաքաղաքների և տեղական բոլոր թերթերը։ Մուտքը 2 կոպ., ամսով 40 կ. աշակերտներից կէս վճար։ 41—50

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ յայտնում է ընկերութեան պ. պ. անդամներին, որ յունիսի 13-ին, կիրակի օրը, երեկոյեան ժամը 8-ին, Թիֆլիսի Դումայի դահլիճում տեղի կունենայ յունիսի 6-ի ընդհանուր ժողովի շարունակութիւնը. կը քննվեն հետևեալ խնդիրները. 1) Քննութիւն և հաստատութիւն կենտրոնի և ճիւղերի հաշիւների 1898, 1897 և 1896 թ. թ., 2) Քննութիւն Ախալցխայի վարչութեան յարուցած հարցի ընկերութեան անձեռնմխելի ֆոնդի մասին. 3) Զեկուցումն ընկերութեան յատուկ գումարների մասին, 4) Զեկուցումն կենդրոնի գրադարանի մասին, 5) Վերաշինութիւն Խուդադեանի քարվանսարայի և 6) Մ. Զմշկեանի առաջարկութիւնը մի որբանոցի կամ մի մատուռի հիմնարկութեամբ յաւերժացնելու ընկերութեան յիշատակը։

Ընկերութեան 1898 թ. տեղեկագիրը ընկերութեան պ.պ. անդամները կարող են ստանալ խորհրդի գրասենեակից—անկիւն Միջին-փողոցի և Երևանեան հրապարակի, նախկին տ. գեներալ Տէր-Աստուրովի։ (ո. շ.) 1—2

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլտուութեամբ

ՊՐՕՖԻԶՕՐ ՇԻԽԻՆՕՎԻ

Պատրաստած նոր սննդարար խմիչք

Տ. Ժ. ՍՈՒՐՃ

Ծախվում են հետևեալ տեղերում։ Թիֆլիսում՝ դեղատան ապրանքների Կովկասեան ընկերութեան մօտ, Օտէլոյի, Մակկէրի և Եակօբովիչի դեղատներում. Офицер. Экономич. մագազինում ու «Общества потребителей З. Ж. Д.»-ի խանութում, Ակօպովի և Գուրգենովի խանութներում, Ավալովի խանութում (Միջին փողոց)։ Գանձակում՝ Սուքեասովի, Վերդիեվի ու Ներսիսեանի խանութներում։ Գորի՝ Բազիարովի դեղատան մէջ։ Ալէքսանդրոպոլ՝ Ալէքսանդրովի և Սէյլանեանցի խանութներում, նաև Ռուսաստանի բոլոր յայտնի խանութներում։ (ո. ե. հ.) 1—3

ЖЖЕНІЕ СПОСОБОМЪ ЛЕТЮРКЪ ДЕ РОЗЬЕ 20% БОЛЬШЕ АРОМАТИЧЕСК. ЧАСТЕЙ
ЖЖЕНЫЙ КОФЕ
ПРОДАЖА ВЕЗДѢ С. СІУ и К°
6—26

Գիւղատնտեսական գործիքներ եւ մեքենաներ

Լ. ԽԱՆ-ԱՂԵԱՆԻ



250 նկարով։ Գինն է 50 կոպ.

Դիմել՝ Тифлисъ, Обществу Изданія Армянскихъ Книгъ. (ե. ռ.) 42—50

HUILE d'OLIVE BESSEDE

Իսկական պրովանսայի իւղ ԲԷՍԷԴ, բոլորովին մաքուր, առողջ և ամենալաւ տեսակից։ Խնդրում են չընդունել այնպիսի շիշեր, որոնց դրոշմները փոփոխած են կամ չունեն ստորագրութիւն։ Զգոյշ կենալ կեղծումից, որոնք աշխատում են նմանացնել դրոշմը կամ շիշի ձևը։ Իսկական ԲԷՍԷԴ իւղը, Մարսէլիայից (Ֆրանսիա) վաճառվում է ամեն տեղ։
5—12

Дозволено цензурою, Тифлисъ, 10 Іюня 1899 г.

Типографія Грузинск. Издат. Т.—ва Орбеліановская ул., № 27.